ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» հուլիսի 2016թ. N 140-Ա

ԱԼԲԵՐՏ ԱՂԵԿՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 161-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված ամենամյա լրացուցիչ արձակուրդի տրամադրման կարգի 3-րդ կետը՝

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ալբերտ Աղեկյանին տրամադրել 2015-2016 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդը՝ 2016 թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը ներառյալ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Համբարձում Համբարձումյանի վրա:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:
4. Աշխատանքի մեջ համարել 2016 թվականի սեպտեմբերի 2-ին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ